Առողջապահության լիցենզավորման ոլորտը կանոնակարգող օրենսդրության մշակման խորհրդատու

Առողջապահության բնագավառում լիցենզավորման ենթակա՝ բժշկական օգնության և սպասարկման տեսակների համար անհրաժեշտ գույքային և տեխնիկական, ինչպես նաև մասնագիտական հագեցվածության պահանջների վերանայում, ըստ ստորև ցանկի.

- արագ թեստերով սքրինինգային հետազոտությունների իրականացման ծառայությունների լիցենզավորման պայման-պահանջների առավելագույն պարզեցում,
- բժշկական կազմակերպություններում բժշկական ծառայությունների որակի կառավարման բաժինների/պատասխանատուների պահանջի ներառում լիցենզավորման կարգերը սահմանող իրավական ակտերում,
- բժշկական օգնության և սպասարկման, դեղատնային գործունեությանն իրականացման լիցենզիաներ ստանալու համար ներկայացված հայտերի փաստաթղթային ուսումնասիրություն, հայտերի և կից փաստաթղթերում առկա տեղեկությունների համապատասխանության ուսումնասիրություն տեղում:

Գործառույթները.

1. Առողջապահության բնագավառում լիցենզավորման ենթակա՝ բժշկական օգնության և սպասարկման տեսակների համար անհրաժեշտ գույքային և տեխնիկական, ինչպես նաև մասնագիտական հագեցվածության պահանջների միջազգային փորձի ուսումնասիրություն,
2. Բժշկական օգնության և սպասարկման տեսակներով սահմանված գործունեության համար անհրաժեշտ գույքային և տեխնիկական, ինչպես նաև մասնագիտական հագեցվածության պահանջների և պայմանների վերաբերյալ Առողջապահության նախարարության խորհրդատուներից մասնագիտական դիրքորոշումների ստացում, վերլուծություն և ամփոփում,
3. Ուսումնասիրված միջազգային փորձի, ինչպես նաև Առողջապահության նախարարության խորհրդատուներից ստացված մասնագիտական դիրքորոշումների ամփոփման հիման վրա առողջապահության բնագավառում լիցենզավորման ենթակա՝ բժշկական օգնության և սպասարկման գործունեության տեսակների համար անհրաժեշտ գույքային և տեխնիկական, ինչպես նաև մասնագիտական հագեցվածության պահանջների և պայմանների վերանայման առաջարկների մշակում,
4. Բժշկական օգնության և սպասարկման գործունեության իրականացման լիցենզավորման կարգերը սահմանող իրավական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտերի նախագծերի մշակում և ներկայացում՝ շրջանառելու նպատակով:
5. Լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորող մարմին ներկայացված փաստաթղթերի՝ ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման N3 հավելվածի 43.1-րդ և N5 հավելվածի 18-րդ կետերով սահմանված կարգին համապատասխանության ուսումնասիրություն:

Պահանջվող որակավորում

1. Բակալավրի որակավորում
2. ՀՀ առողջապահության համակարգի կառուցվածքի, զարգացման հեռանկարների, Առողջապահության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ համակարգված գիտելիքներ:
3. Հայերեն լեզվի (հատկապես գրավոր) գերազանց իմացություն, ռուսերենի իմացություն: